




ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ 17-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՑ



այ-ռուսական հարաբերությունների մասին մեզ հասած հնագույն տեղեկությունները, հիմնականում, պահվել են միջնադարյան հայ պատմիչների և ժամանակակիցների աշխատություններում: Կազմակերպված արխիվների րացակայության հետևանքով, չի մնացել հայ-ռուսական հարաբերությունների մասին 17-րդ դարից առաջ գրված գրեթե ո՛չ մի վավերագիր: Հայ իրականության մեջ արխիվի ստեղծման և պահպանման մասին, փաստորեն, առաջին լուրջ ուշադրություն դարձնողը և կանոնավորողը եղել է Սիմեոն Նրեանցի կաթողիկոսը (1763—1780 թ. թ.), և նրանից հետո էլ միայն, որ մեզ մոտ սկսվում է կազմակերպված արխիվի գոյությունը: Դրանից առաջ մեզ հասած վավերագրերը պատահական են և անսխտմ:

Հայ-ռուսական հարաբերությունների մասին, անհամեմատ, ավելի հարուստ են Մոսկվայի արխիվները, առանձնապես Հիմն վավերագրերի պետական կենտրոնական արխիվը (Центральный госуд. архив древних актов): Նշված արխիվում հայ-ռուսական հարաբերությունների մասին գոյություն ունի հայկական հատուկ ֆոնդ՝ «Сношения России с Арменией» անունով:

Տպագրության հանձնվող ներկա վեց վավերագրերը վերցված են նշված ֆոնդի նյութերից: Այդ վավերագրերը, մոտ վաթսու մամուլ այլ նյութերի հետ միասին, մենք և մեր ընկերը՝ պատմական գիտությունների թեկնածու Դ. Գաբրիելյանը Հայկական ՍՍՌ Պատմության և գրականության ինստիտուտի

հանձնարարությամբ, նշված արխիվում ընդօրինակել ենք 1937—1938 թվականներին: (Մեր հավաքած նյութերն այժմ գտնվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի տրամադրության տակ):

Հրատարակվող վավերագրերի մասին բիր-լիոգրաֆիկ տեղեկություններ տպագրվել են «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» աշխատության մեջ:

Տպագրվող առաջին վավերագիրը — Նոր-Զուղայի հայտնի առևտրական խոջա Զաքար Սահրատյանի (Շարիմանովի) 1660 թվականի դեսպանական պրիկազին ուղղած գրությունն է՝ իր նվեր բերած «Աղամանդյա գահ»-ի վրա եղած ոսկու, արծաթի ծանրության և թանկագին քարերի քանակի մասին: Իր այդ գրության մեջ խոջան հրաժարվում է գնահատել գահն այն պատճառաբանությամբ, որ այն նվիր է ուղարկված իր հոր կողմից, իսկ հայրը գին չի նշանակել. «Իմ խէր սիրեց մեծ թաքավորն, թախթն թամամէց, ինձ արեստ՝ թէ տար թաքավորին փեշքաշ արար, մեք էլ, մեր խէր էլ էտուր գնին խաբար չենք»: Այս վավերագրի ուսմանն թարգմանությունից մեջբերում է արել պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը իր «Ново-торговый устав и договор с армянской торговой компанией в 1667 г.» խոդագրով հոդվածում: Նա ապացուցել է, որ խոջան նվերի անվան տակ, փաստորեն, վաճառել է ինչպես գահը, այնպես էլ իրեն բերած մյուս ապրանքները (տե՛ս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 6, 1947 թ.): «Ալմազյա» այդ գահի և նրա շքեղ ձևավորման մասին հայագի-

տական գրականության մեջ բավականին խոսվել է: Հայտնի է, որ այդ գահը, իր ժամանակին, գնահատվել է 22.539 ռուբլի:

Երկրորդ վավերագիրը — Խոջա Զաքարի 1666 թվականի նամակն է Ալեքսանդր Միխայլովիչ ցարին՝ նկարիչ Բոգդան Սալթանովին Մոսկվա ուղարկելու, ինչպես և որոշ ապրանքներ Ռուսաստան բերելու թույլտվությունը ստանալու մասին: Խոջա Զաքարն այդ նամակն ուղարկել է ջուղայի հայ առևտրական Ստեփան Ռամադամսկու հետ:

Զաքարի այս նամակից երևում է, որ ինքը 1660 թվականին, Մոսկվայում եղած ժամանակ, իր հետ ցարին տարած նվերների մեջ ունեցել է Բոգդան Սալթանովի պղնձե թիթեղի վրա նկարած «Խորհրդավոր ընթրիք», որը, ինչպես երևում է, լավ ընդունելություն է գտել արքունիքում: Ռուսական արքունիքն առաջարկած է եղել Խոջա Զաքարին՝ ուղարկել այդ գործի նկարչին՝ Մոսկվայում աշխատելու և աշակերտներ ուսուցանելու համար: Եվ Խոջան կատարելով արքունիքի հանձնարարությունը, այս գրությամբ հայտնում է, թե ուղարկում է հիշված նկարչին (Պրոֆ. Վ. Պարսամյանն իր մի հոդվածում, «Լեոնարդո դա Վինչի և հայ կուլտուրան» խորագրով, որը տեղավորվել է «Գրական թերթ»-ում (1952 թվի ապրիլի 19, № 14), մեջբերում է արել այս վավերագրից և այն կարծիքը հայտնել, որ նշված նկարը Բոգդան Սալթանովին արտանկարել է Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» հայտնի նկարից):

Երրորդ վավերագիրը — Խոջա Զաքարի 1666 թվականի գրությունն է Դոմայի գրագիր Թմն Արմազ Իվանովիչին այն մասին, որ ինքը, իր խոստման համաձայն, ուղարկում է Բոգդան Սալթանովին Մոսկվա և խնդրում է ներկայացնել նրան արքունիքին, որ օգտագործեն նրան իր մասնագիտությամբ:

Չորրորդ վավերագիրը — Գրիգոր Լուսիկովի 1671 թվականի գրությունն է Ալեքսանդր Միխայլովիչ ցարին: Նա իր գրության մեջ հայտնում է, որ ինքը, իր ապրանքներով և մարդկանցով, եկել է Հաշտարխան և թույլտվություն խնդրել Մոսկվա գնալու համար: Նա միաժամանակ հաղորդել է, որ ինքը շահից ստացած մի շարք հանձնարարական գրություններ է բերել և խոսելիք ունի վրաց թագաժառանգի, դազախի և Հաշտարխանի թալանված առևտրականների մասին, ուստի և խնդրում է ճանապարհին կանգնեցնել այն պատվիրակությունը, որն ուղարկվում է Պարսկաստան՝ ծանոթանալու համար իր բերած գրությունների հետ և այնուհետև, եթե անհրաժեշտ գտնեն, նոր միայն ուղարկել:

Հինգերորդ վավերագիրը — Գրիգոր Լուսիկովի 1671 թվականի հուլիսի 27-ի գրու-

թյունն է այն մասին, որ ինքը իր ապրանքով նստած է Ականում և սպասում է արքունիքի թույլտվությունը՝ մեկնելու դեպի Մոսկվա: Նույն գրության մեջ նա հայտնում է նաև, որ ինքը բերում է շահի մի ռադամը (պաշտոնական գրությունը)՝ 1670 թվականի մարտի 21-ին կնքված առևտրական պայմանագրի մասին, ինչպես և Նոր-Ջուղայի առևտրականների իրեն տված լիազորագիրը՝ արքունիքի հետ առևտրական բանակցությունները շարունակելու մասին:

Եվ, վերջապես, վեցերորդ վավերագիրը — Գրիգոր Լուսիկովի նամակն է ցարական արքունիքի օկոմիչի Արտեմի Սերգեևիչին՝ նրա ընկերներին, ուր նա նշում է այն փոփոխությունները, որոնք շահի կամ Նոր-Ջուղայի հայ առևտրական կամպանիայի հանձնարարությամբ ցանկանում է առաջարկել 1670 թվականին կնքված առևտրական պայմանագրի մեջ:

Վավերագրերը չնայած այս կամ այն չափով հայտնի են պատմագրության մեջ և նրանցից անգամ մեջբերումներ են արված մի քանի ուսումնասիրությունների մեջ, սակայն ամբողջական ձևով դեռ չեն հրատարակված և, ինչ խոսք, արժեքավոր են հայ-ռուսական հարաբերությունների պատմության համար: Պիտի նկատի ունենալ, որ 17-րդ դարից հայ-ռուսական հարաբերությունների վերաբերող շատ քիչ հայերեն վավերագրեր կան և նրանք պատմագիտության համար մեծ արժեք ունեն:

Վավերագրերը արժեքավոր են նաև մեր բարձրագույն պատմության համար, որովհետև նրանց մեջ գործածված լեզուն գավառաբարբառ է՝ իր ժամանակի նոր-ջուղայերենը:

Վավերագրերը գրված են անգրագետ լեզվով, և այդ ավելի է բարձրացնում նրանց արժեքը, որովհետև նրանց հեղինակները ի վիճակի չլինելով դիմելու գրական ոճի, գրել են այնպես, ինչպես իրենք խոսել են և արտասանել, իսկ գրի առնված այդպիսի հարազատ, անխարդախ գավառաբարբառը 17-րդ դարից՝ մեզ համար ունիկալ արժեք ունի:


1 Մեր հոգվածը գտնվում էր տպագրական պրոցեսում, երբ Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսավ «Армяно-русские отношения в XVII веке» խորագրով վավերագրերի ժողովածուն, ուր և զետեղված են մեր այս վավերագրերը: 5-ը՝ Նկատի ունենալով, որ նշված վավերագրերի մեր վերծանությունը զգալիորեն տարբերվում է ժողովածուի հրատարակիչների վերծանությունից, ուստի և ավելորդ չեն համարում հրատարակել մեր վերծանությունը ևս:

1. ԽՈՋԱ. ԶԱՔԱՐԻ 1660 ԹՎԱԿԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

Թախտն¹, Իջ (26) ճոթ ոսկին՝ մեծ պզտիկ Իլ (28) ֆունթ ալ, Ե (5) ճոթ առձաթն Ը (8) ֆունթ ալ, ԸճՂէ (897) ալմազ ալ՝ թէ մեծ, թալ պզտիկ, ՌԲՃՂԸ (1.298) եաղութ ալ, ԺԸՈՒ (18.030) փիրուզ ալ: Տէր Աստուած տալ՝ ուրախ վալելի: Մեք մեծ թաքավորին սաղլուղութէն ի վատ ոչինչ չենք ուզում. սիրէց, աղարկէց, մեզ արեւտ իմ խէր, ինձ ալ տվէլ, գինին խաբար չեմ, ումբրն թաքավորին, իմ խէր սիրէց մեծ թաքավորն, թախթն թամամէց, ինձ արեւտ՝ թէ տար թաքավորին փէշքաշ արար. մեք էլ, մեր խէր էլ էտուր գնին խաբար չենք, ումբրն մեծ թաքավորին:

(ЦГАДА, Ф. Сношения России с Арменией, 1660 г., д. № 1, л. 35).

2. ԽՈՋԱ. ԶԱՔԱՐԻ 1666 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՎԵՔՍԱՆԳՐ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՑԱՐԻՆ



Բաւժիեռ Միլաւտիեռ, Վէլիքիմու Հասոպարիու, Յարիու, ի Վէլիքիմու Քանազիու [Ալէքսի]² Միքայէլովիճու, Յաէիայ Վէլիքիայ, ի Մալիայ, ի Բիլիայ Ըռասիի Սօմադէոսու բի[օտ] չօլում օփշի վաշ յասուտար խօլօպ Ձ[ա]ք[ա]-ր[ա]լ Սահրատի որդի զղլպաշկայ գէմլայ³:

Էստի յառաջ փոքր ծառէդ մին պղնձէ թանուքի վերայ, Աւաք Խինզաբաթ օրէն տնօրինականքն⁴ բաշած, մեծ թագաւորին գլուխ ինք տըւէլ, շաղաւթ էր արարէլ, նորա շինողն ուղեցել էր: Էն քարխանումն, որ շինվել էր, մին զապիլ ուստայ կէր, անունն Բուղտան, որ նորայ հունարն ամենու վերայ առաւել էր. աղարկեցինք քրիստոսայչէն Մօսկոպն, գոն. մեծ թագաւորին դուլուղն տեղն կատարեն, երբ թագաւորին շաղավաթն [ի]նի, գոն:

Մին էլ, մեծ թագաւորն, իւր փոքր դուլին, բազի դուլուղանի էր բուրմիշ արարէլ, Աստուծոյ ողորմութեամբն, ողջ հասիլ գնի: Մեր խնդիրքն Աստուծ[ան]է վն ալ, որ մեծ թագաւորն շաղաւթ առէ, մին ճ ԲՃ (100—200) ասօթ թահ-վիլ տալ, մին հուրմ՝ թէ գնան իւրէնք կամ Ձ[ա]ք[ա]րէն թագաւորին լայեղ իքմին

1. «Թախտ» ասելով Խոջա Զաքարը նկատի ունի «Ալմաստյա» կոչվող դահլ, որն այժմ գտնվում է Մոսկվայում, Կրեմլի զինապալատում:

2. «Ալէքսի» անվան տեղն այստեղ թողնված է չգրված, իսկ վերևում տրված է կապգրով: Հնում, որպէս հարգանք, սովորութիւն է եղել պատվանունները չգրել տնքստում, այլ տալ վավերագրի սկզբում զարգրված կապգրով:

3. Այս պարբերութիւնը, որ հայտատու ուռներն է, թարգմանել կարելի է հետեւյալ ձևով. «Աստու ողորմութեամբ, Մեծ Թագաւորին, Յարին և Մեծ Իշխանին՝ Ալէքսի Միլալովիչին, Համայն Վելիկայա, Մալայա և Բիլայա Ռուսիո Ինքնակալին երկրպագում է Ձեր թագավորական ստրուկ Սահրատի որդի Զաքարիան՝ պարսից երկրից»:

4. Աւաք Խինզաբաթ օրէն տնօրինականքն— նկատի ունի Ավազ Հինզաբաթի օրվա Խորհրդավոր ընթրիքը:


բհամ առեն, բերեն: Թահվիլի մապլաղն հքմոմն գրվի ո՛չ, որ տեղէքս՝ որչանք ուղենք, էնչանք ասէնք, գրա մեծ թագաւորին ուղեցած ըռօսպիսոմն բաղի բան կայ, չորի [ա]րզ, ըռոսպաթ չնի, բերել չեննիլ, էն թահվիլին անուանօքն էն հքմոմն արզ կառենք, Աստուծով, հասիլ կառենք, բերենք. առանց էտ՝ հոքմ, թահվիլ, բերել չնի: Երբ ասում անք էսպէս բան անք շինում, տանում Մօսկովն մեծ թագաւորին, ասում ան՝ էվ ալ, թահվիլ ինք, առ, ինչ կուզես շինէ, [բ]համ արայ, վեռ գնայ: Երբ փոքր ղուլդ թահվիլով գոյ ղուլուլ, ո՛չ մեծ թագաւորն հազ կառէ, ո՛չ իւր փոքր ղուլին պարզերեսութիւն գնի: Ումիտվար անք՝ մեր խնդիրքն շաղաւթ առես:

Պաւտլուի մէնայ վէլիքի] հաստատար, միլօսէրոտի հաստատար ծար, վէլիքի քնազ [Ալեքսի] Միխայէլօվիճ, [Ֆսեի]այ վէլիքիայ, ի Մալուիայ, ի Բեիլայ Ռասի Սամարէոսեց, պօթալուի մէնայ:

Շուռ տված էջի վրա հասցէն՝ «Մօսկովն, մեծ թ[ա]քաւորին արզէն»:

(ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1660 г., д. № 1, л. л. 92—93).

3. ԽՈՋԱ. ԶԱՔԱՐԻ 1666 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍԱՅ ԱՐՔՈՒՆԻՔԻ ԳՐԱԳԻՐ ԱԼՄԱԶ ԽՎԱՆՈՎԻԶԻՆ



Տ[է]յ Ա[ստուա]ծ տայ մեծ [թագաւորի] շուքն, շաղաւթն գովելի պարոն Այմազ Խվանօվիճին վերայ լինի: Արդ ու բանդակի լինի քո հրամանուց ղուլուղումն՝ էստի յառաջ քամինէդ մին պղնծէ թանուքի վերայ Աւաք Հինգշաւթ օրէն մաճլիս քաշած, մեծ թ[ա]գ[աւոր]ին գլուխ անք տռէլ, շաղաւթ էր

5. «չնի» — բնագրում «կննի», բայց իմաստից երևում է, որ գրչական սխալ է, պիտի լինի «չնի»:

6. Այս պարբերութիւնը, որ հայատառ ոտաներն է, հետեւյալ բովանդակութիւն ունի: Խղճա ինձ Մեծ Թագաւոր, Ողորմած Թագաւոր, ծար, Մեծ Իշխան Ալեքսի Միխայլովիչ, համայն Վելիկայա, Մալայա և Բելայա Ռուսիո Ինքնակալ, ողորմիր ինձ»:

7. Անկյունավոր փակագծի մէջ առնված «թագաւորի» բառը թաղնված է չգրված և տրրված է վավերագրի սկզբում կապերը դարձագրով:

լէլ ծառայէր: Նորայ շինուլն ուղեցել ին՝ էն քարխանումն, որ շինվել էր, մին ուստայ կէր, որ նորայ բանն, հունարն ամենու վերայ առաւել էր, անունն Թանրիվէրան՝ որ է քրիստոնէի բառ՝ Բողոքան, ընդդէմ արարինք, մին աղով, ջղվի էլ իբրին տվինք սարմայիայ դէյի, որ էնտի խառնելով գոն, որ շուրէ տեղդ մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին շատ զարար չլինի: Տեղդ ումըն մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին: այ, դորայ լէվ հունար ուսանիթ ունի, քարամ առես, մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին արգ առես, երբ Ա[ստու]ած տայ դուռդ բոլորիշ առես, որչանք մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին արգ րին կամքն այ, դուռդ տեղ կատարես: Երբ դորա սանիթէն ընդդէմ կու լինէք, կու խոսանէք, դարիլ լինի, երկու սահապուղուֆ նաղաշ աշկերտ դէյի դրայ կշտին կու դնէք, դրայ սանիթէն շուրի խինգ վեց ամիս սովորին, դորայ ընտախաթ լինի, որ գոյ: Երբ դայ շուտ ընդդէմ գոյ տեղս, ինչ սահապուղուֆ ուստի որ թաքիֆ առենք, շուտ կաղարկենք, Ք[րիստոս]այ ողորմութեամբն, մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին շաղաւթ առես: Նիաթ ունինք, որ գոնք ուստ, մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին դուռդ տեղ կատարենք, Ա[ստու]ած տայ: Կու խնդրեմ քո հրամանուցէն, շուրդ, շաղաւթդ քո ծառայոցէն պակաս չնի: Մառայոցդ թէ մին հասապի մաթլապ լինի, հասիլ առես, դոր յառաջմէ շաղաւթ ունիր, քանց էն առաւել շաղաւթ առես: Ումիտվար անք Ք[րիստոս]է: Քո հրամանուց արարածին աւելն, լէվութիւն տայ քո հրամանուցն, քո ազիզ գովելի որդոցն: Գրեցաւ գիրս թիւն Մ շ Ժ Է Ե (1666), մարտ Ժ (10), օրն շաբաթ: Ի քո ծառայ Սա[հ]րաւի որդի Զաքարայ խնդրողէ դայս բանս:

(ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1666 г., д. № 1, л. л. 97—98).

4. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻՆՈՎԻ 1671 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻՆԱՅԼՈՎԻՉ ՑԱՐԻՆ

Մարհու, Աստղարու, ի Վէլիքայմու Քընայդու էլէքսէիու Մովսայելիւ-շու, Յըսէա Վէլիկիեայ, ի Մալիեայ, ի Բէլիեայ Ընէսի Սամայդէրժէցու բիօտ չըլում խօլօսի վաշ օպչի շախվի պատլանիւրշկայ Գըրիշկայ Լուսիկօլ Սըֆայ-հայնէց:

Որ ապրէլի Ին (25) եկել այմ Հաշթարխան, կացել ամ, շուրի մեծ թա-գաւորին ուկազ է եկել, էն շաղն բայայրին Իվան Բուղդայնիլին բանդէտ ընայ-վանայ է արարել՝ գուլման ինք Մօսքօլ մեծ թագաւորին ղուլտըրն: Ասթա-վայդա վէր, Զըթթայուսումն, քո մեծ թագաւոր պատլանիկ Լնդրէ Պըրկըլօնցկի ուրիշ Վոդմի ջըրօվն հանց եկայց, տեսնու չըկարացի՝ թէ յիմանի՝ ի՞նչ մաթ-լապի խամար էր գընաման շայ Սըլիմանին ղուլտըրն. թէ որ գոռճի ծառայ-վիշին բանին համար, կամ թէ ղազախին բանէրին համայր, կամ թէ Հաշթար-խանայ թալանած քուիլինանոց բանին համար է գընաման, շըֆայդաթ արա, մեծ թագաւոր, շախար աղարկէ Հաշթարխան՝ գընայ ոչ, որ էս Գ (3) բայնս բերում այմ ղուլտըրտ, յիմանայս, էն շաղն ինչ լազումայ է, գրես, աղարկես շայ Սըլէմանին, որ քո, մեծ թագաւոր, պառքիտ նելում լինի: Թէ որ ուրիշ մաթլապի համար է գընաման, Աստուած ուր բանըն աջողի, գընայ բարին:

8. Հայատառ սուրբն այս պարբերութիւնը հետեյալ բովանդակութիւնն ունի. «Ծա-րին, Թագաւորին և Մեծ Իշխանին՝ Ալեքսի Միխայլովիչին, համայն Վելիկայա, Մալայա և Բելայա Ռուսիո Ինքնակալին երկրպագում է Զեր ստրուկը, պարսկական ընդհանուր պատվի-րակ Գրիշկա Լուսիկովը՝ սպահանցի»:

Բայարին քրնազ Եաքօվ Մըքիթավիչին էլ էսպէս գրել այմ թէ՛ մեծ թագաւորին՝ պասլայնիկն, որ գընաման ալ զամրում, թէ էս բանէրիս համար է գընաման, պախես, գընալ ոչ, չուրի չափար այմ աղարկէլ Մօսքօվ, մեծ թագաւորին արգամ արարէլ Ականես, մեծ թագաւորին ուկագն, թէ որ ուրիշ բանի համար է գընաման՝ պախես ոչ, Աստուած ուր բայն աջողի:

Դարձեալ, Զ (6) տարի ալ, որ մեծ թագաւորին ղուլուղէն ջուկվէլ այմ, գընացել զամրում, Բ (2) տարի թամայմ շալ Սըլեմանին ղըրուցըն կացել այմ: Գլխօվս, ապրանքօվս, խուզօվս քե՛ մեծ թագաւոր, ղուլուղ այմ արարէլ վասըն քըրիստոյնութենէն խաթիր համայր. Աստուած սաղ թուղու, բանի կենդան մնամ, էլ ղուլուղ կանոմ քե, մեծ թագաւոր:

Դարձեալ, շալ Սըլեմանըն ըռուխաթ ըռլամ արեւո, որ խալ սօվդայգաթէրըն խում ապրիշումօվ, ղէրիեալ ապրանքօվ գում Ըռուըն էն ղարաւումն, ինչպէս մեծ թագաւորն շըֆայղաթըմայ գիր է տվել, խէն ղըմղէն տան, գընայն գում. մին տարէն մոտ ԸՌ (8.000) խալ շալին քուլի երկրումն ապրիշում գում գկու, որ մին խակն Զ (6) փուտ ալ, ողջ գը կու Ըռուըն:

Դարձեալ, բայն շատ կալ, մեծ թագաւոր, քո սարքարին պէտկ այն՝ ո՛րն աշկարէ, ո՛րն ծածուկ:

Միլայէրդի Ասուղար ի Վէլիքայմու Քընազ էլէքսէ Միխայէլիչու, Ֆըսէա Վէլիկիեայ, ի Մալիայ, ի Բելիեա Ըռէսի Սամայդէրժէց, պօժալէ մընեայ՝ խօլօփ վաշ օպլըլօ⁹, քուլումիշ արայ պասլանիկըն Հաշտարխան պախեն, չուրի ես գում Մօսքօվ, համէն հաֆալ մեծ թագաւորին ծածուկ արգամեմ, էն շաղն ինչ լագումայ է՝ շալ Սըլեմանին գըրես, որ իմ աշխատանքըն էլ զալ շընի, որ ջաֆալ շատ եմ քաշէլ: Մեզ ֆարզ էր քե յիմաց անիւք, ալ դայ ուրբն մեծ թագաւորին ալ:

(ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1672 фев. 22—1673 фев. 21, д. № 1, л. 24).

5. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻԿՈՎԻ 1671 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ՆԱՄԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԽԱՅԼՈՎԻԶ ՅԱՐԻՆ

Մարու, Ասուղարիու, Վէլիքայմու Քայնայգու էլէքսէ Մուխայէլիչու, Ֆսըսէեայ Վէլիկիեայ, ի Մալիայ, [ի] Բելիեայ Ըռէսի, Սամայդէր[ժ]ցու բիստ չըլում խօլօփ վաշ օպլի շախվի օպլըստի պասլայնիչըզկայ Գըրիշկայ Լուսիկօվ¹⁰:

Որ անցեալ տարին, Հայոց թվին ՌՃԺԹ.ումն (1670), շամա մին¹¹, ապրիշըմին մամուլէն շինվեցաւ, շալ Սըլեմանէն ըռուխաթ ելաւ, ըռալլամ տվին, որ խում ապրիշումօվ, ղէրիեայ ապրանքօվ մեր աշխարքին թուճայրըն գոյհն Ըռուըն, մեծ թագաւորին թամղէն, ինչպէս զարար անք արարէլ, տայն, գընայն Ֆըռանկըստայն: Մեծ թագաւորին մեզ տվայծ շըֆայղաթըմայ գիրումն, ինչպէս որ գրայծ է, էնդի օրինակըն վեռին, շալին տված ըռլամումն գրեցին: Շալին ըռլամն ինձ խեւ բերում այմ մեծ թագաւորին ղուլուղըն:

9. Հայատառ ուսանողն այս պարբերական բովանդակութիւնը հետեւյալն է. «Ողորմած Թագավոր և Մեծ իշխան Ալեքսի Միխայլովիչ, համայն Վալիկայա, Մալայա և Բելայա Ռուսիո ինքնակալ, ողորմիր ինձ, Ձեր բոլորի ստրուկին...»:

10. Տե՛ս նախորդ վավերագրի սկզբի պարբերական թարգմանութիւնը:

11. Շամա ամսի 1-ը համապատասխանում է մարտի 21-ին:

Դարձեալ, մեր քալանթարըն, կուպանէքն արդայ այն գրել մեծ թագա-տորին, համէնքընին արդին յետ կուտըն ձեռն այն գրել, մըրէլ՝ թէ ինչ օր ֆա-ղիրիս Մօսքօվայ մեծ թագաւորին ուղտուտմն հառէշմէ շինէլ եայմ, կամ էլ ինչ բայն յետու շինեմ, դարուդ այ: Էս արդէս էլ բերում այմ մեծ թագաւորին ղուլուղն:

Դարձեալ, շայ Սըլեյմայնըն ֆաղիրիս շըֆայդաթ արար՝ բուլմիշարար նամայ է տվէլ՝ թէ տայր իմ ախբօր՝ Մօսքօվայ թագաւորին, բերում այմ մեծ թագաւորին ղուլուղն:

Դարձեալ, գուռճի ձարայվիշին բայն էլ լէվ գընի, ինչպէս մեծ թագաւորին մաթլապըն այ, ղուլուղ եամ արարէլ, որ կը շինվի:

Դարձեալ, բայն շատ է հանց կացէլ, ողջ լէվ գում՝ մեծ թագաւորին ղուլուղն արդ առեմ:

Դարձեալ, եկի Շամբախի. մեր շողեցիք շամ ելայն խում ապրիշումօվ, դէրիեայ ապրանքօվ՝ թէ գում ըռուաին երկիրըն: Խօվ խաբար արեկ՝ թէ քամ-զաթ ղազախըն հաշթարխանցիք խաբէլ եայ, բերթըն ղաֆտէլ, սօվդայդարէ-րըն թալանէլ: Մեր շողեցիք էլ լըսեցին, գընացին Խոռմացումն՝ թէ էս մին սաֆարըս առենք, չուրի ըռուաին երկիրըն թամիզվի, էն շաղն գում: Ալ դեայ ԺԴ (14) ամիս այ, որ ֆաղիրըս, իմ ջոմիաթօվըս, նըստէլ այմ Ականում, որ մեծ թագաւորին քանազըն լաշկարօվ գոյ, Հաշթարխան մըտու, վէր կամ գում մեծ թագաւորին ղուլուղն:

Դարձեալ, էսօր Ե (5) տարի եայ, ֆաղիրըս էս ջաֆէս քաշում եայմ՝ թէ շանքն մեծ թագաւորին ուղտուտմն պարզեղես [ի]նիմ:

Միլայսէրդի Ասուղար փ Մար Վէլիկքամու Քանաղ Էլէքսէ Մուխայէվիշու, Յըսէա Վէլիկիեայ, ի Մալիայ, [ի] Բիլիեայ Ըռէսի, Սամայդէրփէց, պօթայլէ մանայ խօլօփ սըլօ օփշըվօ¹², շֆեայդաթլըմայ գիր աղարկէ Հաշթարխանայ քանազ Բօվադին, որ ֆաղիրըս պախեն ոչ, շուտօվ մեծ թագաւորին ղուլուղն գում, որ իմ շուտօվ գուլըն մեծ թագաւորին ամենայն կողմանէ լէվ այ, խա-ղինին շախ եայ:

Գրվեցաւ Դարբա[ն]դ թվին ՌՃԻ.ումն (1671), ղամար ամսին Թ.ումն (9-ումն)¹³, պատկեր օրն Ե.շարաթ (հինգշաբթի):

(ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1672 фев. 22—1673 фев. 21, д. № 1, л. 37).

6. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻԿՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՕԿՈՒՆԻՋԻ ԱՐՏԵՄ ՍԵՐԳԵԵՎԻՋԻՆ ԵՎ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Այդպիսիձայ Առտեմոյն Աէրգէվիշ, դումնայ դիաք Գրիգոր Կարպիօվիշ, որ ընկերանոցըն արդ լինի, որ ես՝ Գրիգորըս ձեր ղուլուղումն աջի թէ՝ Քրիստոս արեկ հաշթարաբըս Մօվսէսի գրածն պակասըն լըցի, չե՝ թէ պաղասացանեւ: Էս խօսկըս էնտուր խըմար աջի, որ մեծ թագաւորըն մեր խահէրին խըմար շըֆայդաթլըմայ գիր էր տվէլ թէ՝ խում ապրիշումօվ, դէրիայ ապրանքօվ գոյն Ըռուաին, մեծ թագաւորին դըմղէն քըրէն տայն, ինչպէս որ գրայծ է, վօլնայ, գընայն նէմցու երկիրըն: Ես՝ Գրիգորըս, մեծ թագաւորին շըֆայդաթլըմայ գիրըն տարայ, շայ Սըլեյմայնին նըշանց տվի: Ուրէնց դօստութէն, ախբէրու-

12. Տե՛ս նախորդ վավերագրի նույն բովանդակությամբ վերջարանի թարգմանությունը:

13. Ղամար ամսի 9-ը համապատասխանում է հուլիսի 27-ին:

Թէն սէրին համար ղարուկ արար, բուրմիշ արար, գրեցեցին շային դըֆտարուն: Մեծ թագաւորին գրտան ինչ գրած է, պակասացանելուն նըմայն չե: Էնտուրացի Թէ՛ Քրիստոս արեկ Սօվսէսի պակասուն լըցել, չե՛ Թէ պակասացանել: Այ դայ շըֆայղաթ կառէք, մեծ թագաւորին արգ կառէք, էլ ինչ պակաս է մնացել, լըցէք:

Դարձեալ, շայ Սըլեմայնըն ասաց Թէ՛ իմ երկրումն համէն Գ Դ (3—4) օրէն ճանապարհում Ա (1) ըռտար ամ դըրէլ, որ մին բեռնէն Ճ (100) դիան, ՃՍ (150), ԲՃ (200), չուրի ԳՃ (300) դիայն ան¹⁴ ինք առման, քուլի էն խաւէպեցին, Ճ.ին Բ (հարուրին՝ երկու) դառ խասաւ ոչ: Ում հագում որ սօվղայգարի ապրանք կտրի, իմ ղուկերն կու գըդանին, կը տայն տէրըն, Թէ գըտանին ոչ, Թօվունըն կը տայն էս սախմանքօվըս: Իմ երկիրըն էսպէս յիստակ պախում ալն, որ գող հարամի չե հասիլ գալման: Մեծ թագաւորին շըֆայղաթնըմայ գրտան որ դըմղէն քըրէն գրած էր, շայ բուրմիշ արար, խըսէպեցին, որ շային երկրին խայ սօվղայգարէրըն՝ խում ապրիշումօվ դէրեայ ապրանքօվ գոյ Ըռուարն՝ Զ (6) հասէն մին կը տայն մեծ թագաւորին խաղինէն: Շայ Սըլեմայնըն ասաց Թէ՛ իմ երկրին դըմղէն շըզվայ, սօվղայգարի գիաթին ճանապարհըտան օթայ ենք, սօվղայգարի գիայն չե նըմայն, իմ ախօր երկրումն դըմղէն քուլիայ է: Գրէլ ալ Թէ՛ սօվղայգարին ճանապարհին գիայնըն քըրէքաշնեբըն տայն, շայ Սըլեմայնըն ասաց Թէ՛ պալքի քըրէքաշէրին փողն յասանի ոչ, էնտուր խըմար է գրէլ, Թէ՛ խայ սօվղայգարին Աստուած գիայն յոչ տայ, Թաղմին քըրին փողէն Թամամեն տայն, որ խաթիրշամ գոյն գընայն: համ՝ մեծ թագաւորին բօվաղէքըն ըռուարն երկիրըն պիրկ կու պախեն, շային երկրին պէս գող հարամի չե նըմայն:

Դարձեալ, նէմցու երկրումն մեր խայ սօվղայգարէրըն պը կընայն, ապրայնքն կը տայն փոստըն, ինչ քաղաք որ ուղում նի՝ գընայ տեղն ապրայնքն սալամաթ ինք կառու, ինչ խալճըն ալ, կը տայն, Թէ որ դըռճվի կամ գող հարամի կամ կորցանեն Թօվունըն կը տայն, կուղէք խարցուցէք:

Դարձեալ, մեծ թագաւորըն բուրմիշ է արարէլ՝ Թէ խայ սօվղայգարէրըն խում ալրիշումօվ, դէրիայ ապրանքօվ գոյն Ըռուարն, իմ սըրադանումն կըռի ինի, ձեռ չե տալման՝ Թէ գընայն նէմցայ, [Թէ՛] Ըռուարումն ծախեն: Թէ որ առող չընի, ծախեն մեծ թագաւորին խաղինէն: Կամքըն մեծ թագաւորին ալ, ղարուկ ունինք, էնպէս գընի, որ նոր շըֆայղաթնըմայ գրում ապրիշմին գին դնէք, որ առող չընի, էն դարարօվն ծախեն մեծ թագաւորին խաղինէն նաղտ փող ինք առում, որ մեր խայ սօվղայգարեբըն խաթիրշամ գոյն գընայն, Ֆըքը չառեն Թէ՛ մեք որ գընայնք, ըռուարն պալքի սարադանումն կըռի նի, Թուլուն ոչ նէմցայ գընայնք, մեր ապրանքն ոտն գըծեն, յեծայն առուն:

Դարձեալ, շըֆայղաթ արայ ալկալինիճայ Առտէմոյն Սէրգէվիշ, դումայ դիաք Գրիգոր Կարպիշ, մեծ թագաւորին շըֆայղաթնըմայ հառէլմի՝ պրած գիրըն պակասացանել մէք, չունքի շայ Սըլեմանին դըֆտարումն գըրվէլ ալ, նոր շըֆայղաթնըմայ գրումն մեծ թագաւորին մաթլապըն էլ կելացուցէք, որ ախրէր շայ Սըլեմանին մաթլապըն էլ կելացուցէք, որ Բ թագաւորըն էլ ուրախ նի, չուրի աշխարքիս վերըն՝ սէր, միայրայն:

(ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1672—1773 г.г., д. № 1, л. 155).

14. «Դիայն ան» բառերից հետո տողից վերև գրված է «սով» բառը, որը «սով» աղավաղված ձևն է, գործածված «գինար» համար:

ՅԱՆԿ ՕՏԱՐ ԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ

ալկայեիճա	— առտակահան՝ ОКОЛЬНИЧИЙ—	լեվ ա	— լավ է
աղարկել	— ցարին մոտ կանգնած	լեվուրիւն	— լավություն, բարիք
աշխարհ	— բարձրաստիճանի պաշ-	լըցի	— լրացնի
արգ	— տոնյա	խագիճա	— դանձարան
ացի	— ուղարկել	խաքիրջամ	— գոհ
աւէզն	— բացահայտ	խալն	— խաբշ, աստեղծող դրամ
բագի	— դիմում	խախ	— հակ
բանդակի	— սոսացի	խարցուցանել	— հարցնել
բնամ առնել	— փոխարկել	խէր	— հայր
բուրմիշ անել	— որոշ	խըսէպել	— հաշվել
բուրմիշարար	— ծառայություն	խնդրող	— դիմող
բովաղի	— ճարակ, ձևը բերել	խովանել	— հավանել
գլուխ տալ	— հրամայել	խուզով	— հոգով
գոն կամ գոյին	— հանձնարարական	խոռամացում	— Թյուրքիա
գոռնի	— զինվորական	խում	— հում, շմշակված
գրոնվել	— երկրպագել, խոնարհել	խով խարար	— սառը լուր, ալսինքն՝ վառ
գրփտար	— կան		— լուր
գրմղա	— վրացի	ծարայվիշ	— գահաժառանգ
գիաֆ	— թրջվել	կացել ամ	— մնացել հմ
գուր	— մատյան	կուպանէլն	— կամպանիայի անդամները
գոտաբիւն	— մարտ	հագ	— հակ
գամբում	— գրագիր	հագ	— համույր
	— խնշ որ	համեմբքն	— բողոք
	— գոմայի	հանէմէ	— սոսաջուց
	— բարեկամություն	հաս	— եկամուտ
	— առտակահան՝ ЗАМЕРЬЕ— ար-	հասապի	— կարեոր
	— տասահման, օտարություն	հասը բերել	— գլուխ բերել, կատարել
գայ լինել	— փշառալ, ոչնչանալ, կորչել	հարամի	— գող, ավազակ
գիան	— վնաս	հաֆալ	— տեղեկություն
գրա	— որովհետեւ	հուհար	— շնորհ
էն շնդն	— այն ժամանակ	հուրմ	— հրաման
ըռագի	— գոհ	դարուլ անել	— հավանել, ընդունել
ըռագի անել	— գոհացնել	դարուլ	— ընդունելի
ըռաղամ	— պաշտոնական, գրություն	դապիլ	— հմուտ
ըռայվան	— թուլություն	դարար	— կարգ
ըռտար	— պարսկական՝ բանդար—	դարար անել	— սահմանել
	— մարտ վերցնող պաշտոն-	դերինայ	— ալլ
	— յա	դուլ	— ծառա
ըռոսպիս	— ցոցակ	դուլուլ	— ծառայություն
բախտ	— գահ	նոք	— կոտոր
բանվիլ տալ	— թույլ տալ	մարլապ	— գործ, ցանկություն
բաղմա	— տե՛ս դըմղա	մանլիս	— ժողով
բամայմ	— լրիվ	մամլա	— գործարք
բամամել	— ավարտել	մապլաղ	— դումար
բայ	— թե	մովել	— կնքել
Թանգիվերան	— Աստվածատուր. նույն է	նետ կուսքս	— հետևը
	— Բոգդան կամ Ալահվերդի	յինէլ առնուլ	— վերցնել
բախիֆ	— սոսաջարկ	նամայ	— նամակ
բունայիւր	— վաճառական	նաղաշ	— նկարիչ
թովան	— վնաս	նըմայն չէ	— Թուլատրելի չէ
իֆմիե	— իր, գործ	նի	— լինի
լագում ալ	— հարկավոր է	նիար	— նպատակ
լայնդ	— վայել, արժանի	շախ	— օգուտ
լաշկար	— գործ		

շաւաղաք	—	շնորհ, ողորմութիւն, հրա-	սափար	—	գնալու ձեռնարկ
		ման	սրբազա	—	սահման
շրճայղարներմայ գիր	—	հրամանագիր	սօմ	—	ռուբլի
շուք	—	հովանի	սօվիշայգար	—	առևտրական
նտըն գըցել	—	վարկաբեկել	վեռիք	—	վերցրին
ուկազ	—	հրաման	վօլնայ	—	առական՝ ВОЛНЫЙ —
ուղուրումն	—	սիրո համար			ազատ
ոււրբ	—	կամք, ցանկութիւն	բալանբար	—	դեկավար, վարիչ
ուսիտվար անք	—	հուսով ենք	բամգար	—	վատազգ
շանքնի	—	որովհետեւ	բամինէլ	—	բլինչի, ողորմելիք
շափար	—	սուրհանդակ	բանազ	—	առական՝ КНЯЗЬ — իշխան
շուրի	—	մինչև որ	բարամ անել	—	ողորմել, խղճալ
պասայելիկ	—	պատվիրակ	բարխանա	—	արհեստանոց
պիրիկ	—	սմոր	բն	—	քեզ
ջամ լինել	—	հավաքվել	բրէքաշ	—	քրեհար
ջափա	—	նեղութիւն	բուլի	—	ողջ, բոլոր
ջըզվ	—	փոքր, շնչին, ամուշան	բուլի	—	մեծ, շատ
ջուկվել	—	բաժանվել	բուփի	—	գնորդ, առևտրական
ջումբար	—	ժողովուրդ	կելացենել	—	աթիւլացենել
սալամար	—	անվնաս	օրայ լինել	—	հանձնառու լինել
սանապուդուփ	—	հմտո՝ արհեստի մեջ	փաղիւ	—	խեղճ
սաղլղութիւն	—	ողջութիւն	փարզ	—	պատշաճ, անհրաժեշտ
սանբար	—	արհեստ	Ֆրոանկրստայն	—	նվորպա
սարմայա	—	դրամագլուխ	փիբ	—	միտք
սարբար	—	արքունիք			

